



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 17015

Փետրուար 28, 1967

Հոգեշնորհ

Տ. Ժիրայր Արեղայ Թաշնեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Երրոզութիւն Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Թորոնթօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Ստացած ենք 1967 Փետրուար 15 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Փետրուար 12ին գումարուած Ձեր Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հետեւած թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղեկութիւններ ղրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնենք գործադրութիւնը Կանոնադրութեան տրամադրութեանց:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել նորընտիր Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

Թորգոմ Եպիսկոպոս  
Առաջնորդ

Տիարք՝ Հայկ Սէլեան  
Կարօ Տէրմէնճեան  
Պետրոս Զիլինկիրեան  
Արթօ Կիւլեան  
Բենամին Ամբակումեան